

* * *

Քու ձեռներուդ խրատսին մէջ լուսաւէս,
 Ու ներդառնակ շարժումներու զաղտնիքն՝
 Արքնցուցիր անհուն ձայներ որ կ'երգեն
 Լըռութեան հետ, երազին հետ, նրազին հետ:

Ձեղաւ բոլոր մ'իսկ որ հոգիդ բաժնուէր
 Արեւադարձ իր զարթումին ծաղիկէն,
 Ինչ ըստաւում էր ամէն յոյս, երբ արդէն
 Կեանքն հեռագնաց մեկնող մալի կը նմանէր:

Այսպէս տեսնում ու մարմնօրէն անապակի,
 Ինչպէս եթէ սրէդ աղբիւր մը բըխէր,
 Դուն ապրեցար ցայգը լուսնակ առ լուսնակ,

Մինչ բերկրանքի մը խոստումով կը բացուէր
 Սուրբ ձեռներուդ ոսկի պտուղն հասունցած,
 Ամէն իղձէ եւ արձունքէ խնկարբած:

ԱՐՄԷՆ ԵՐԿՍԹ

Ե Ր Ա Ջ Ա Ն Ն Ո Ւ Ա Ճ

Մանկութենէս ինծի հետ մեծցաւ երազ մը իմ մէջ.
 Ձեւ ու հասակ առաւ ան եւ բզգեցաւ գիծ ու գոյն.
 Ձայն պահեցի միշտ կուրծքիս ու գգուեցի զայն անվերջ,
 Տալով անոր մայրօրէն ի՛նչ ունէի լաւագոյն:

Ու ան՝ ալ ի՛մա է հիմայ, զաւկի մը պէս լուսերես,
 Ինձմով սընած, զօրացած՝ հոգի առած հոգիէս.
 Ամենուրեք ինծի հետ՝ ան ինծի զէն ու վահան,
 Ռո՛ղ կ'անցնեմ աներկիւղ մարդոց կռուէն այս դաժան:

Ան խաւարին վրայ կեանքիս ջահի մը պէս կը վառի,
 Ու կիրքերուն վրայ անոր՝ խաղաղարար շունչ բարի.
 Ան աչքերուս յանդիման՝ զերթ հայելի մոգակեան...

Վաղըջական իմ անցեալն ու հեռաւոր ապագան
 Կամրջող գիծն է ոսկի, ա՛ն, իմ երա՛զըս աղուոր,
 Ուրկէ հոգիս կ'ընթանայ յոյսով, լոյսով բեռնաւոր...:

Ն. ԹԱՄԱՄԵԱՆ